ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՍՈՂԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավոր Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանը (ավազանի անունը Ղազարոս) ծնվել է 1909 թ. Բեհեսնի քաղաքում (Հորրորդ Հայք, Մալաթիա): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կորցրել է իր հարազատներին եւ պատանեկության դժվարին տարիներ անցկացրել Մոսուլի եւ Բաքուպայի «Տարագրելոց» եւ «Արարատյան» որբանոցներում: 1924 թ. ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան, որտեղ անց է կացրել համեմատաբար խաղաղ ու արդյունաշատ տարիներ: Հաջողությամբ ավարտելով վարժարանի դասարանական քառամյա բաժինը՝ 1928 թ. Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ձեռամբ սրացել է սարկավագական աստիճան եւ այլեւս ամուր կերպով կապվել Հայ Եկեղեցուն ու վանական կյանքին: Նա այն բախտավորներից էր, որոնք աշակերտել են Երուսաղեմի հայոց պատրիարքներ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին, Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին եւ Տ. Բարգեն արքեպիսկոպոս Կյուլեսերյանին (հետագայում՝ Բարգեն Ա Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո): Այս լավագույն եկեղեցականների դաստիարակության արգասավոր պտուղն էր Տ. Թորգոմ պատրիարքի ձեռամբ 1932 թ. կուսակրոն քահանա ձեռնադրված Տ. Ասողիկ աբեղա Ղազարյանը:

Սկսվում է նրա կյանքի բուռն շրջանը Երուսաղեմի հայոց պատրիարքարանում՝ որպես վանական–վարչական գործերի պատասխանատու: Գիտելիքների մեծ պաշարի արդյունքն էր նրա ուսուցչական գործունեությունը Յաֆա քաղաքի ազգային վարժարանում:

1937 թ. Տ. Ասողիկ աբեղան Տ. Թորգոմ Պատրիարքի տնօրինությամբ սկսում է իր հոգեւոր գործունեությունը Ծայրագույն Արեւելքում՝ Չինաստան, Մանջուրիա, Ճապոնիա: Արդեն որպես Տ. Ասողիկ վարդապետ՝ նա մեծ ջերմությամբ է ընդունվում տեղի հայ հավատացյալների փոքրիկ համայնքի կողմից: Վարդապետական կյանքում եւս եղել են մեծ դժվարություններ. 1941 – 1945 թթ. Տ. Ասողիկ վարդապետը բանտարկվում է ճապոնացիների կողմից Խարբինի համակենտրոնացման ճամբարում եւ միայն Խորհրդային բանակի Մանջուրիա մուտք գործելուց հետո է ազատվել բանտարկությունից ու վերադարձել իր հոգեւոր պաշտոնին: Հոկտեմբեր 19-ին Վեհափառ Հայրապետին գրած նամակում Տ. Ասողիկ վարդապետը պատմում էր իր քառամյա բանտարկության եւ ազատման մասին. «Ճաբոնցոց կողմէ իրբեւ թշնամի ձերբակալուած լինելով, պատերազմի սկզբէն մինչեւ ռուսական գրաւումները, այսինքն չորս երկար տարիներ բնականաբար եկեղեցին փակ էր եւ գաղութս զրկուած էր ամէն տեսակ կրօնական մխիթարութենէն:

Վեհափառ Տէր, Ձեր ընտրութեան բարի լուրը, ինչպէս նաեւ կրօնական ազատութեան

հոչակումը Խորհրդային երկիրներու մէջ, ամբողջ ծայրագոյն Արեւելքի հայ գաղութիս կը պատճառեն մեծագոյն միխիթարութիւնը եւ կը հրճուինք բոլորով սրտիվ»[1]:

Վեհափառ Հայրապետին գրած իր նամակներից մեկում էլ 1947 թ. սրբազանը խոսում է Խարբինի հայ գաղութի մասին. «Հայ գաղութը շատ փոքր է Չինաստանում: Խարբինում կա միայն մեկ հայկական եկեղեցի եւ շուրջ 150 հայ: Եվ գաղութի հայության մեծագոյն մասը կը պատրաստուի մօտ ապագային ճանապարհ իյնալ դէպ Հայրենիք: Վեհափառ Տէր, հօտիս հետ ես ալ կուզեմ գալ Հայաստան, Եթէ Ձերդ Վեհափառութիւնը կարտօնէ»[2]:

1950 թ. նա կրկին Երուսաղեմում էր՝ միաբանների ջերմությամբ պարուրված:

1951 թ. Տ. Ասողիկ վարդապետը հրավիրվում է պաշտոնավարելու Կալիֆոռնիայում:

Իսկ արդեն 1955 թ. մայիսի 24-ին Հոգեւոր Խորհրդի նախագահ Տ. Վահան արքեպս. Կոստանյանին գրած նամակում պատմում է Ավստրալիայում իր առաջնորդության եւ տեղի հայ գաղութի կազմավորման մասին. «Ինծմով առաջին հայ եկեղեցականն է, որ մուտք կգործէ այս երկիր: Հոս եկած եմ շուրջ չորս ամիսներ առաջ խնդրանօք տեղւոյն փոքրաթիւ հայ գաղութի ներկայացուցիչներուն եւ կարգադրութեամբ ու հրամանաւ Երուսաղէմի Ս. Աթոռոյ տեղապահի պատրիարքութեան գերաշնորհ Տեր Եղիշե արքեպս. Տերտերյանի: Կաշխատենք կազմակերպել այս շատ փոքրիկ գաղութը եւ կը ջանանք հիմը դնել Սիտնէի մէջ առաջին Հայ Եկեղեցիին»[3]: Նրա կյանքում ճակատագրական էին 1957 թ. դեպի Մայր Հայրենիք եւ Սուրբ Էջմիածին ուխտագնացության օրերը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Վեհափառի հրավերով հոկտեմբերի 30-ին Երուսաղեմի Հայոց Սրբոց Հակոբյանց վանքի միաբան Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը նույն միաբանության անդամ, Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի Հայրապետական պատվիրակ Տ. Ասողիկ ծ. վարդապետ Ղազարյանի հետ Մայր Աթոռում էին: Այդ օրը կարծես տոն լիներ Մայրավանքում: Միաբանները ճեմարանականների հետ միասին լարված սպասում էին հյուրերի ժամանմանը: Հայրապետական օրհնությամբ Տ. Հայկազուն եպս. Աբրահամյանը պիտի սրանձներ Հոգեւոր ճեմարանի տեսչի պարտականությունը, իսկ Տ. Ասողիկ ծ. վարդապետին պիտի շնորհվեր եպիսկոպոսական աստիճան: Նրանց ընդունեցին ջերմությամբ եւ առաջնորդեցին Իջման Սուրբ Սեղանի մոտ, ուր աղոթք առաքեցին առ Աստված: Հյուրերին ողջույնի խոսք ասաց լուսարարապետ Տ. Սահակ արքեպս. Տեր-Հովհաննիսյանը. «...Հոգեշնորհ Ասողիկ Հայր Սուրբ, թեեւ Ձեզ առաջին անգամն ենք հանդիպում, բայց Ձեր անունը եւ Ձեր անձնվեր գործունեությունը մեզ քաջ ծանոթ են արդեն...»[4]:

Տպավորիչ էին այդ բոպեները Տ. Ասողիկ վարդապետի համար: Նա իր շնորհակալությունն էր հայտնում ընդունելության համար եւ միաժամանակ Հեռավոր Արեւելքում ապրող հայ հավատացյալների կարոտն էր փոխանցում Վեհափառին: Տ. Ասողիկ վարդապետի համար առավել հուզումնաառատ ու տպավորիչ էր հանդիպումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ. նա համբուրեց Հայրապետի Սուրբ Աջը՝ արցունքն աչքերին...

Արդեն նոյեմբեր 24-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի Տ. Ասողիկ վարդա-

1 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», Գիրք Զ, Գեորգ Զ Չորեքչյան, Եր., 1999թ., էջ 299:
2 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Կաթողիկոսական արխիվ, ֆոնդ Ասողիկ արքեպս. Ղազարյանի.
3 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», Գիրք Զ, էջ 879:
4 «Էջմիածին», 1957թ., հոկտեմբեր, էջ 7:

Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյան

պերը ձեռնադրվում է եպիսկոպոս եւ նոյեմբեր 25-ի Հայրապետական կոնդակով նշանակվում Հայրապետական նվիրակ ու առաջնորդ Հեռավոր Արեւելքի երկրներում՝ Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, Ավստրալիա, Մալազիա, Բիրմա: Սա երեւի նրա հոգեւոր գործունեության լավագույն շրջանն էր: Հետաքրքիր է հատկապես սրբազանի զեկույցը Ավստրալիայի հայ համայնքին: Նա խիստ կարեւորում է Հայ Եկեղեցու դերը, խոսում նրա հրաշալի եւ փրկարար նշանակության մասին ազգապահպանման գործում: Այսպես նա սկսում է հրատարակել «Լույս» ամսաթերթիկը, ինչը շատ լավ ընդունելություն է գտնում ավստրալահայերի կողմից:

Իր առաջնորդության տարիներին Տ. Ասողիկ սրբազանը մեծ նպաստ է բերել Հայ Եկեղեցուն. նա գործունյա առաջնորդ էր, կարողանում էր համախմբել հայության բեկորներին եւ նրանց պահել հավատի լույսի ներքո: Սրբազան հոր հեղինակությունը մեծ էր Հնդկաստանում: 1959 թ. մարտի 1-ին Կալկաթայի հայոց Սուրբ Նազարեթ եկեղեցում հընթացս Սուրբ Պատարագի նա ընթերցում է Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը՝ ուղղված Կալկաթայի Եկեղեցական Խորհրդին եւ ասում է, որ «Վեհափառ Հայրապետը մասնաւոր սէր եւ համակրանք ունի հանդէպ հնդկահայութեան, ի մասնաւորի Կալկաթայի եւ անոր եկեղեցական վարչութեան հանդէպ, եւ սոյն սրբատառ կոնդակը Նորին Սուրբ Օծության սրտի անկեղծ ու գուրգուրոտ արտահայտութիւնն է»[5]: Երբ 1959 թ. Համայն Անգլիոն եպիսկոպոսապետ դոկտոր Ջեոֆֆրի Ֆիշերը, ով հյուրն էր Հնդկաստանի Անգլիական Եկեղեցու եպիսկոպոս Արաբինո Չաղերջիի, Ավագ ուրբաթ օրն այցելում է Կալկաթայի Հայոց Սուրբ Նազարեթ եկեղեցի եւ հանդիսավորապես ընդունվում Տ. Ասողիկ սրբազանի, քահանայաց դասի եւ եկեղեցական վարչության անդամների կողմից: Ջերմ ու սրտաբուխ էր հայ հավատացյալների անունից Ասողիկ սրբազանի ողջույնը. «Ձերդ Գերապատվութեան ազնիւօրէն կարճ ժամանակ մը մեզի կրամադրելը այսօր եւ մեզի հետ լինելը շատ կարեւոր եւ հիշատակելի օր մըն է մեզի, որուն համար մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք

5 «Էջմիածին», 1959, հունիս, էջ 14-16:

ու շնորհակալութիւնը, որով կարելի դարձուցիք այս բացառիկ այցելութիւնը…: Ձերդ Գերապատվութեան կը մաղթենք կատարեալ յաջողութիւն Ձեր այս բացառիկ ճամբորդութեան, որը պատմական նշանակութիւն ունի եւ կարեւոր է կրօնական տեսակէտէն Անգլիական եկեղեցիի եւ համայն քրիստոնէական եկեղեցիներու համար: Դարձիվն ունինք ըլլալու Ձերդ Սրբազնութեան եղբայրն ի Քրիստոս: Բարի եկաք Աստուծո այս Սուրբ տունը»[6]: Հանդիպման ավարտին սրբազան հայրը Քենթրբերիի արքեպիսկոպոսին է հանձնում ոսկե մի խաչ՝ ի հիշատակ այցելության:

1962 թ Ազգային-եկեղեցական ժողովի հոկտեմբերի 18-ի նիստում Տ. Ասողիկ սրբազանն ընտրվում է Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ եւ մինչեւ 1965 թ. ապրիլ 9-ի նիստը մնում Խորհրդի կազմի մեջ: Նույն թվականից Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Ասողիկ եպիսկոպոսը սկսում է դասավանդել Գեւորգյան հոգեւոր Ճեմարանում:

1966 թ. մայիս 10-ին Իրաքի Թեմական խորհրդի դիմումին ընդառաջ Հայրապետական կոնդակով Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը նշանակվում է իրաքահայ թեմի առաջնորդ: 1974 թ. սրբազանը պապական նվիրակ Ժան Ռյուպի նախագահությամբ մասնակցում է էկումենիկ աղոթքի. մայրենի լեզվով հնչած աղոթքը Քրիստոսի ընդհանրական եկեղեցու միության, աշխարհի խաղաղության համար էր:

Ծավալուն եւ բուռն եկեղեցական գործունեության համար Վեհափառ Հայրապետը 1975 թ. հոկտեմբերի 12-ի թիվ 815 կոնդակով Տ. Ասողիկ սրբազանին շնորհում է արքության պատիվ. «Դուք, սիրելի՛ Սրբազան, Ձեր անբասիր հոգեւորականի վաստակով, Ձեր հեզահամբոյր բնաւորութեամբ եւ ժողովրդասէր ոգիով, վստահ ենք, թէ Ձեր ուսերուն վրայ դրուած լուծը պիտի կրէք բարձր կոչման գիտակցութեամբ, իրաւ նուիրումով եւ բարի ու առատ արդիւնքներով…»[7]: Բայց Հայ Եկեղեցին իր կամարների ներքո որպես արքեպիսկոպոս սրբազանի ոգու եւ աշխատանքի ուժը շատ քիչ ժամանակ զգաց:

Վազգեն Վեհափառն իր մտերիմ միաբաններին հուզմունքով է պատմել Տ. Ասողիկ սրբազանի վերադարձը Բաղդադից դեպի հայրենի հող եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Արդեն վատառողջ՝ սրբազան հայրը խնդրում է իրեն տեղափոխել Հայաստան, որպեսզի հայրենիքի կարոտը սրտում չմահանա: Ինքնաթիռում իրեն ուղեկցող բժշկին խնդրում է, որ երբ երեւա Արարատ լեռը, իրեն օգնեն, որ նստի եւ տեսնի այն: Զրույցի պահին երեւի բժիշկը մոռանում է հիշեցնել, որ արդեն հայրենի հողում են եւ պետք է տեսնի Արարատը….Բայց սրբազանը կարծես զգում է, որ մոտ է Արարատին եւ խնդրում է իրեն բարձրացնել պատուհանի մոտ: «Ես այդ պահին հասկացա, որ այլեւս առողջ եմ եւ կարող եմ շարունակել ծառայությունս…»,- Վեհափառին իր ապրումներն է պատմել սրբազանը:

Սակայն 1978 թ. մարտի 7-ին երկարատեւ հիվանդությունից հետո մահացավ Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանը: Նրան առավոտյան էին Բաղդադից բերել Հայաստան, որ կյանքի վերջին օրերն անցկացնի Սուրբ Էջմիածնում, բայց արդեն ուշ էր. հիվանդությունն իր գործն արել էր: Սրբազանի վերջին օծումը կատարվում է Սուրբ Գայանե վանքում ձեռամբ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի, աճյունն ամփոփվում է Սուրբ Գայանեի միաբանական գերեզմանատանը:

6 «Էջմիածին», 1959, հունիս, էջ 60:
7 «Էջմիածին», 1975, հոկտեմբեր, էջ 3:

Լուսահոգի Տ. Ասողիկ սրբազանի արխիվը՝ նամականին, Վեհափառ Հայրապետի գրագրությունը Հայ Եկեղեցու միաբանների եւ հայ հավատացյալների հետ, ինչպես նաեւ նրա անձնական լուսանկարները պահվում են Մայր Աթոռի արխիվում: Վստահաբար, երանաշնորհ Սրբազանի գործունեության վերաբերյալ վավերագրեր եւ արխիվային նյութեր պահպանված կլինեն նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարքարանում եւ Ծայրագույն եւ Հեռավոր Արեւելքի հայոց եկեղեցիներում:

Հայ Եկեղեցու անձնվեր սպասավորի ծննդյան 100-րդ տարեդարձի առիթով թող այս փոքրիկ անդրադարձը որպես խունկ եւ օրհնություն լինի նրա հիշատակին: